

ՏԵՄԼԵԼ ԱՍՏՈՆ ԼՊԱՏԱԿԸ ԻՄ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԵՋ

Տեսնել Աստծո Աչքերով

Մաս3

«Միրելիներ, տարօրինակ մի համարեցեք որն է փորձություն, որ կրակի նման այրում է ձեզ: Անբնական մի համարեցեք այն, այլ ընդունեցեք որպես մասնակցություն Քրիստոսի չարչարանքներին և ուրախացեք, որպեսզի երբ Քրիստոսը հայտնվի իր փառքով, նույնպես ուրախանաք ցնծությամբ:»

Ա Պետրոս 4:12-13

«Նա ի սրտե չի նեղացնում և տրտմեցնում մարդկանց որդիներին:»
Երեմիայի Ողբերը 3:33

1.Աստված Օգտագործում Է Խնդիրները Ինձ Ուղղություն Տալու Համար

«Մարդիս սիրտը խորհում է իր ճանապարհը, բայց նրա քայլերը Տերն է հաստատում:» Առակաց 16:9

«Հարվածի վերքերը մաքրում են չարությունը...» Առակաց 20:30

«Ես մտածում եմ քո ճանապարհների վրա, և իմ ոտները դարձնում եմ քո վկայություններին:» Սաղմոս 119:59

«Ուրախ եմ հիմա, չե որ դրա համար որ տրտմեցրել եմ ձեզ...այլ որովհետև պատճառ դարձավ փոխեք ձեր վարմունքը և... Աստծու գործին ծառայել:» Բ Կորնթացիս 7:9

2.Աստված Օգտագործում Է Խնդիրները Ինձ Ստուգելու Համար

«Ես Տերս, քննում եմ սիրտը՝ փորձում եմ երիկամունքը, որ տամ մարդիս իր ճանապարհներին համեմատ և իր գործերի պտուղին համեմատ:»
Երեմիա 17:10

«Նրան այցելես ամեն առավոտ, ամեն վայրկյան նրան փորձես:» Հոբ 7:18

«Մարդիս բոլոր ճանապարհները մաքուր են իր աչքի առաջին, բայց Տերն է հոգիների կշռողը:» Առակաց 16:2

«Հիշիր այն բոլոր ճանապարհը որ քո Եհովա Աստվածը այս քառասուն տարիումը քեզ ման ածեց անապատի մեջ որ քեզ խոնարհեցնի, քեզ փորձելու և սրտիդ միջինը իմանալու համար, թե արդյոք նրա պատվիրանքները կպահես թե ոչ:» Երկրորդ Օրինաց 8:2

«...ես քեզ փորձեցի նեղության հալոցում.» Եսայիա 48:10

3.Աստված Օգտագործում Է Խնդիրները Ինձ Ուղղելու Համար

«Եթե Աստված ձեզ չ'հանդիմանի, ինչպես անում է իր բոլոր որդիներին, նշանակում է թե դուք նրա որդիները չեք և խորթ եք նրան...Աստված խրատում է մեր բարիքի համար, որպեսզի հաղորդակից դառնանք նրա սրբությանը:» Եբրայեցիս 12:8-10

«Ահա երանելի է այն մարդը, որին Աստված խրատում է, ուրեմն ամենակարողի խրատն մի մերժիր:» Հոբ 5:17

«Նա աղբատին կազատի իր թշվառությունումը, և բռնության միջոցով կբանա նրանց ականջը:» Հոբ 36:15

«Լավ է ինձ համար որ խոնարհվեցա որ քո հրամանները սովորեմ:» Սաղմոս 119:71

4.Աստված Օգտագործում Է Խնդիրները Ինձ Պաշտպանելու Համար

«Նա կփրկի ձեզ որսողի որոգայթիցը:» Սաղմոս 91:3

«Քեզ էլ կ'հաներ նեղության երախիցը մի ընդարձակ տեղ, ուր որ նեղություն չկա.» Հոբ 36:16

«Ավելի լավ է չարչարվել բարիք գործելով, եթե այդ է Աստծու կամքը, քան թե չարիք գործելով:» Ա Պետրոս 3:17

«Թե պետ դուք ինձ դեմ չարություն խորհեցիք, բայց Աստված այն լավի դարձնել խորհեց:» Մննդոց 50:20

«Տերիցն է մարդիս քայլերի հաջողությունը, ուրեմն մարդս ի նչ է հասկանում իր ճանապարհը:» Առակաց 20:24

5.Աստված Օգտագործում Է Խնդիրները Ինձ Կատարելագործելու Համար

«Ամեն շնորհ պարզևող Աստվածը, որ Քրիստոս Հիսուսի միջոցով իր հավիտենական փառքին կանչեց ձեզ՝ նկատի ունենալով որ, ինչ որ չափով մասնակից եղաք Հիսուսի չարչարանքներին, կկազդուրի, կգորացնի, և ամուր հիմքերի վրա կհաստատի ձեզ:» Ա Պետրոս 5:10

«Ներկայումս այս կրած մեր թեթև նեղությունը արտակարգ գերազանց և հավիտենական փառք է ապահովում մեզ համար:» Բ Կորնթացիս 4:17

«Ոչ միայն այսքան, այլևս պարծենում ենք մեր նեղությունների մեջ ևս գիտենալով որ նեղությունները մեզ տալիս են համբերություն, համբերությունը սովորություն, սովորությունը հույս:» Հռովմայեցիս 5:3-4

Հաջորդ Քարոզի Թեման
«Տեսնել Հարաբերությունները
Այնպես Ինչպես Աստված Է Տեսնում»
Հովիվ Սարո Խաչիկեան